Հունիսի 3-ին, ժամը 18:30 ԵՊՀ Բիզնես ինկուբատորը կազմակերպում է «Թվային և նորարար տեխնոլոգիաների կիրառումը գյուղատնտեսության մեջ» սեմինարը, որը կվարի Թվային գյուղատնտեսության հայկական ինստիտուտի (AI4DA) հիմնադիր և գործադիր տնօրեն Վարդան Ուռուտյանը:

Վարդան Ուռուտյանը Թվային գյուղատնտեսության հայկական ինստիտուտի (AI4DA) հիմնադիրն ու գործադիր տնօրենն է: Ինստիտուտը թվային գյուղատնտեսության ոլորտում ձևավորվող գերազանցության կենտրոն է, որը խթանում է նորարարությունը, հետազոտությունները և կարողությունների զարգացումը խելացի տեխնոլոգիաների միջոցով, ներառյալ՝ ֆերմերների համար նախատեսված IoT լուծումները, գյուղատնտեսական ռոբոտաշինությունը, ճշգրիտ գյուղատնտեսությունը և ագրոտեխնոլոգիական կրթությունը երիտասարդների համար:

2008-2018 թթ. նա ղեկավարել է «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» (ICARE) հիմնադրամը: 2010-2018 թվականներին եղել է ԱՄՆ Տեխասի A&M համալսարանի Գյուղատնտեսական էկոնոմիկայի դեպարտամենտի հրավիրյալ պրոֆեսոր (Adjunct Professor): ԱՄՆ-ի և Եվրոպայի առաջատար համալսարանների հետ համատեղ մշակել և իրականացրել է գյուղատնտեսության և ագրոբիզնեսի ոլորտի համաշխարհային մակարդակի մի շարք կրթական ծրագրեր:

2001թ-ից մինչ օրս դասավանդում է ՀԱԱՀ Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնում (ATC), որը ստեղծվել է Տեխասի A&M համալսարանի, ՀԱԱՀ-ի և ԱՄՆ Գյուղդեպարտամենտի հետ համատեղ և առաջարկում է անգլերեն լեզվով միջազգային ստանդարտներին համապատասխան ագրոբիզնեսի կրթական ծրագրեր:

Վարդան Ուռուտյանը Երևանի գինու ակադեմիայի (EVN Wine Academy) համահիմնադիրն է. այն անգլալեզու կրթական հաստատություն է, որը 2015 թվականից մրցունակ մասնագետներ է պատրաստում Հայաստանի զարգացող գինեգործության ոլորտի համար:

Ուռուտյանը պաշտոնավարել է որպես Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտոր 2018-2023 թթ.: Այդ ընթացքում նախաձեռնել է արմատական փոփոխություններ կրթական ծրագրերում, ստեղծել ուսանողակենտրոն, մրցունակ կրթական միջավայր և հիմնել շուրջ 60 նորարարական լաբորատորիաներ, կենտրոններ և ուսումնա-արտադրական ենթակառուցվածքներ:

Ուռուտյանը ավելի քան 40 գիտական հոդվածների հեղինակ է, ինչպես նաև արժանացել է բազմաթիվ ազգային և միջազգային մրցանակների:

Սեմինարի ձևաչափը առկա է, գրանցվել հղումով: